# ՓԱՍՏԱԲԱՆԻ ԱՐՏՈՆԱԳՐԻՆ ԵՎ ՎԿԱՅԱԿԱՆԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ՊԼԱՍՏԻԿ ՔԱՐՏԸ ՓԱՍՏԱԲԱՆԻՆ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՏՐԱՄԱԴՐՎՈՒՄ Է ԱՆՎՃԱՐ

14.07.2018 15:55

***Հարգելի փաստաբաններ,***

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 01.03.2018թ. թիվ 106-Լ որոշմամբ «**Փաստաբանի արտոնագիր և վկայական տրամադրելու» կարգում** (**այսուհետ՝ Կարգ**) կատարված փոփոխություններով սահմանվել է **փաստաբանի արտոնագրին և վկայականին փոխարինող պլաստիկ քարտի** տրամադրման կարգը:

2018 թվականի մարտի 1-ի դրությամբ գործող փաստաբանական գործունեության արտոնագիր ունեցող փաստաբանների համար Կարգով սահմանված էր փաստաբանի արտոնագրին և վկայականին փոխարինող պլաստիկ քարտն անվճար ստանալու հնարավորություն՝ Կարգով սահմանված ժամկետում դիմում ներկայացնելու դեպքում:

**ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 29.06.2018թ. թիվ 299-Լ որոշմամբ Կարգում կատարված փոփոխությամբ սահմանվել է, որ Պլաստիկ քարտն առաջին անգամ՝ անկախ դիմումը ներկայացնելու ժամկետից, փաստաբանին տրամադրվում է անվճար:**

***Ծանոթություն.*** Պլաստիկ քարտ ստանալը փաստաբանին չի զրկում իր վկայականը և արտոնագիրը զուգահեռ օգտագործելու իրավունքից:

**Բեռնել «Փաստաբանի արտոնագիր և վկայական տրամադրելու» կարգը.**

**** Կարգի վերջին ինկորպորացիան՝ 29.06.2018թ. դրությամբ***

**Բեռնել փաստաբանի արտոնագրին և վկայականին փոխարինող պլաստի քարտ ստանալու մասին դիմումի ձևաթուղթը.**

## Առաջարկվող նորություններ

02.03.2018ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐՆ ԱՅՍՈՒՀԵՏ ԿԱՐՈՂ ԵՆ ՈՒՆԵՆԱԼ ՓԱՍՏԱԲԱՆԻ ԱՐՏՈՆԱԳՐԻՆ ԵՎ ՎԿԱՅԱԿԱՆԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ՊԼԱՍՏԻԿ ՔԱՐՏ

30.04.2018ԵՐԿԱՐԱՁԳՎԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆԻ ԱՐՏՈՆԱԳՐԻՆ ԵՎ ՎԿԱՅԱԿԱՆԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ՊԼԱՍՏԻԿ ՔԱՐՏ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԸ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" &&
parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })